

բութեանց ձեռնարկած են Հայերէն՝ նախ Գարակէօզեան եղբարք, որոցմէ Տիգրան Գարակէօզեան և իր գործակատարներն՝ էլիկիւզէլ Գարրիէլ (<sup>1</sup>) ու Ֆէնէրճեան Յովակիմ՝ ընդ երկար բնակած են, յաջող գործերով, Դարէժի բանուկ և վաճառաշահ մայրաքաղաքը. Յակոբեան եղբարք, որոց որդիքը ցարդ կը շարունակեն կանոնաւորապէս այդ արիական առևտուրը. Ֆնտրքլեանք՝ մանաւանդ հաճի Յարութիւն Ֆնտրքլեան, (հայր՝ բանասէր վաճառական Գառնիկ Ֆնտրքլեանի) որ նմանեալ բարքով աւելի ճարպիկ գտնուեցան՝ մերթ ընդ մերթ շահեկանապէս ներդաշնակուելու պարսկական կնճառոտ հոգեբանութեանց հետ:

Ահա ասոնք և ուրիշ քանի մը հայ տուներ՝ մինչեւ 1885՝ կատարած են մեծկակ գործեր Պարսկաստանի և անոր ներկայացուցիչներուն հետ ի կ. Պոլիս՝ ստէպ պերաքի վրայ և յաւիտենական երկարատեւ ապառիկներով ու երկարմատեան սկիզբներով, որ առաջին պայմաններն եղած են այս կարգի տուրեւառներուն: Ասոնք՝ իրենց կ. Պոլիսի ճիւղաւոր գործերուն յաջողութիւններով և անգլիական մեծ վարկերով՝ կըրցած են տոկալ ընդ երկար այդ երկարմատեան ապառիկներու դրութեան և շարունակել պարսկահայ գնացիկ վաճառականութիւնն ալ, որ նշանաւոր է մանաւանդ մեծաքանակ ծախելու քան շահելու կողմէն: Իցիւ թուրքահայք՝ միշտ գործ ունեցած ըլլային միայն կիրական Պարսիկներու հետ, որոնց ուղղութիւնն և կրթութիւնը գովուած է հին օրերէն մեծ մատենագիրներէ:

(<sup>1</sup>) Մէծոտիկ զուարթախօս և ուսումնասէր անձնաւորութիւն մը, որ իր կեանքի վերջին 20 տարիներն անցուց Տովհաննէս և Մարթէն Յակոբեանց գործերուն մէջ, և կրթական հաստատութեանց կտակելով 500ի չափ ոսկի մը՝ վախճանեցաւ պատիւով ի Բերայ կ. Պոլիսի, բաւական զգոյշ և լուրջ զօրութիւն մը պակսեցունելով այսպէս Յակոբեանց գործէն: